ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2022 թվականի N 1038-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 6-րդ հոդվածի 1-ին մասով և 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման NN 3, 4, 5, 9 և 9.1 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ողջաբերդ բնակավայրի սողանքային գոտում գտնվող 4-րդ և 5-րդ կարգի վնասվածության աստիճան ունեցող թվով 15 բնակելի տների բնակիչներին (այսուհետ՝ շահառուներ) բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով տրամադրել ֆինանսական աջակցություն բնակարանի գնման վկայագրի (այսուհետ՝ վկայագիր) միջոցով՝ 241,897.5 հազ. դրամի չափով՝ համաձայն N 5 հավելվածի.

2) տրամադրվող ֆինանսական աջակցության չափի հաշվարկման համար հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից ներկայացված ընտանիքի կազմին համապատասխան հասանելիք բնակարանի սենյակների թիվը, 1-սենյականոցի համար՝ 45 քառ. մետր, 2-սենյականոցի համար՝ 55 քառ. մետր, 3-սենյականոցի համար՝ 65 քառ. մետր, 4-սենյականոցի համար՝ 75 քառ. մետր, 5-սենյականոցի համար՝ 85 քառ. մետր ընդհանուր մակերեսը և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից հրապարակված՝ Աբովյան համայնքի բազմաբնակարան շենքերի բնակարանների ընդհանուր մակերեսի մեկ քառ. մետրի համար 2022 թվականի ապրիլին ձևավորված շուկայական գինը՝ 248.1 հազ. դրամ:

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված վկայագրերը տրամադրվում են շահառուներին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի կողմից ծանուցումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում՝ վերջիններիս կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացված դիմումի հիման վրա.

2) վկայագրի և դրա միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 309-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի և վկայագրի միջոցով աջակցություն ստանալու իրավունք ունեցող ընտանիքի միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ վկայագրի միջոցով բնակարան (բնակելի

տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն ստանալու մասին կնքված պայմանագրի հիման վրա.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նախատեսված աջակցության պայմանագրում որպես պարտադիր պայման է ամրագրվում՝

ա. շահառուների կողմից իրենց 4-րդ և 5-րդ կարգի վնասվածության աստիճան ունեցող բնակելի տան քանդումը՝ աջակցություն ստացողի միջոցների հաշվին՝ աջակցության միջոցով բնակելի տան (բնակարանի) ձեռքբերումից ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում,

բ. հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որի համար քաղաքացին դիմում է ներկայացնում ոչ ուշ, քան վթարային տունը քանդելուց հետո մեկամսյա ժամկետում.

4) տրամադրվող վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման ժամկետ է սահմանվում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը՝ առանց ժամկետի երկարաձգման հնարավորության.

5) վկայագրում ամրագրված ժամկետում բնակարան (բնակելի տուն) ձեռք չբերելու դեպքում վկայագիրը համարվում է մարված.

6) սույն կետի 3-րդ ենթակետի պայմանները չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարված գումարները ենթակա են վերադարձման պետական բյուջե՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում վկայագիր ստանալու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին դիմում չներկայացրած, կամ տրամադրվող վկայագրից հրաժարված, կամ վկայագիր ստացած, սակայն սույն կետի 4-րդ ենթակետում նշված ժամկետում բնակարան (բնակելի տուն) ձեռք չբերած անձանց (ընտանիքների) բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ սույն որոշման շրջանակներում պետական աջակցության տրամադրումը համարվում է դադարեցված, սակայն այդ անձանց (ընտանիքների) համար պահպանվում է պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման այլ ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման իրավունքը.

8) տրամադրվող վկայագրում նշվող ֆինանսական աջակցության չափից ցածր արժողությամբ բնակելի տան (բնակարանի) ձեռքբերման դեպքում արժեքների տարբերությունը մնում է աջակցություն ստացող անձի տրամադրության տակ, իսկ ավելի բարձրի դեպքում՝ արժեքների տարբերությունը լրացվում է աջակցություն ստացողի սեփական միջոցների հաշվին:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավարին շահառուի կողմից սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի աշխատանքների իրականացումից հետո՝ սահմանված կարգով փոփոխել շահառու սեփականատերերի հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման (տնամերձ) հողամասերը փոխադրելով գյուղատնտեսական նշանակության (բազմամյա տնկարկների կամ վարելահողերի) կատեգորիայի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ